Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ
Առաջին Նախագահության առաջին խորհրդական

Փնտրենք Քրիստոսին Սուրբ Ծննդյան օրերին

Բոլոր նրանց, ովքեր ցանկանում են հասկանալ, թե ովքեր ենք մենք՝ որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամներ, ես կցանկանայի առաջարկել այս երեք բառերով սահմանված ելակետը՝ մենք փնտրում ենք Քրիստոսին:

Մենք ձգտում ենք ճանաչել Նրան, մենք հետևում ենք Նրան, ձգտում ենք ավելի շատ նմանվել Նրան:

Տարվա ընթացքում ամեն օր մենք փնտրում ենք Նրան: Սակայն հատկապես տարվա այս շրջանում՝ Սուրբ Ծննդյան օրերին, երբ տոնում ենք մեր սիրելի Փրկիչի ծնունդը, մեր սրտերն ավելի ու ավելի են հակվում դեպի Նա:

Որպես Սուրբ Ծնունդը տոնելու նախապատրաստության մաս, եկեք խորհենք այն մասին, թե ինչպես էին նրանք, ովքեր ապրում էին երկու հազարամյակ առաջ, պատրաստվում ողջունել Փրկիչի գալուստը:

Հովիվները

Մենք շատ բան չգիտենք հովիվների մասին, միայն այն, որ «այն տեղումը հովիւներ կային դաշտումը կացող, որ գիշերն իրանց հօտերը պահում էին»:[1] Հովիվները, թերևս, այն հասարակ մարդիկ էին, ինչպես գովասանքի արժանի շատերը, ովքեր անցկացնում են օրը՝ վաստակելով իրենց ապրուստը:

Նրանք կարող են ներկայացնել մարդկանց, ովքեր մի ժամանակ, գուցե, ջերմեռանդորեն չէին փնտրում Քրիստոսին, սակայն նրանց սրտերը փոխվեցին, երբ երկինքները բացվեցին, և Քրիստոսի մասին հռչակվեց նրանց:

Սրանք այն մարդիկ են, ովքեր երկնային սուրհանդակների ձայնը լսելուց հետո անմիջապես գնացին Բեթլեհեմ՝ ցանկանալով տեսնել:[2]

Մոգերը

Մոգերը գիտնականներ էին, ովքեր ուսումնասիրում էին Մեսիայի՝ Աստծո Որդու գալուստը: Իրենց ուսումնասիրությունների միջոցով նրանք գտան նշանները, որոնք մատնանշում էին Նրա ծննդյան մասին: Երբ գտան դրանք, նրանք թողեցին իրենց տները և ճամփորդեցին դեպի Երուսաղեմ, հարցնելով. «Ո՞րտեղ է Հրէաների ծնուած Թագաւորը»:[3]

Քրիստոսի վերաբերյալ նրանց գիտելիքը չմնաց զուտ որպես գիտություն: Նրա ծննդյան նշանները տեսնելուց անմիջապես հետո նրանք գործի անցան: Նրանք նպատակ դրեցին գտնել Քրիստոսին:

Մոգերը կարող են ներկայացնել նրանց, ովքեր փնտրում են Քրիստոսին սովորելու և գիտական ուսումնասիրությունների միջոցով: Ճշմարտության հանդեպ նվիրվածությունն, ի վերջո, առաջնորդում է նրանց գտնել Քրիստոսին և երկրպագել Նրան որպես Թագավորների Թագավոր, մարդկության Փրկիչ:[4]

Սիմոնը և Աննան

Սիմոնը և Աննան կարող են ներկայացնել նրանց, ովքեր փնտրում են Քրիստոսին Հոգու միջոցով: Այս հրաշալի անձնավորությունները նվիրյալ հոգևորականներ էին և ծոմի ու աղոթքի միջոցով, նվիրումով ու հնազանդությամբ անհամբեր սպասում էին՝ տեսնելու Աստծո Որդու գալուստի օրը:

Լինելով հավատարիմ, խոնարհ և հավատով լի, նրանք համբերությամբ սպասում էին, թե երբ է գալու Փրկիչը:

Ի վերջո, նրանք քաղեցին իրենց համբերության պտուղները, երբ Մարիամը և Հովսեփը նրանց ներկայացրին երեխային, ով մի օր Իր վրա էր վերցնելու մարդկության մեղքերը:[5]

Հավատացյալները նեփիացիների և լամանացիների մեջ

Մորմոնի Գրքում կա մի հուզիչ պատմություն այն մասին, թե ինչպես են հավատացյալները Նոր Աշխարհում սպասում Փրկիչի ծննդյան նշաններին:

Դուք հիշում եք, որ նրանք, ովքեր հավատում էին Քրիստոսին, ենթարկվեցին ծաղրի ու հալածանքների: Այդ օրերին իրենց զարգացած մարդիկ համարողները մեղադրեցին հավատացյալներին սնահավատության մեջ: Ի դեպ, անհավատները նույնիսկ «մեծ աղմուկ» բարձրացրին երկրում իրենց ծաղր ու ծանակով (3 Նեփի 1.7): Նրանք ծաղրում էին նրանց, ովքեր հավատում էին, որ Փրկիչ էր ծնվելու:

Նրանց զայրույթն ու մոլեգնությունն այնքան սաստկացավ, որ որոշեցին մեկընդմիշտ լռեցնել նրանց, ովքեր հավատում էին Փրկիչին: Մորմոնի Գրքում արձանագրված է այդ պատմության հուզիչ ավարտը:[6]

Այդ ժամանակաշրջանում ապրող հավատացյալները կարող են ներկայացնել նրանց, ովքեր փնտրում են Քրիստոսին նույնիսկ այն ժամանակ, երբ ուրիշները ծիծաղում են, ծաղրում ու զրպարտում: Նրանք փնտրում են Քրիստոսին նույնիսկ այն ժամանակ, երբ ուրիշները փորձում են ծաղրել իրենց որպես անբարեկիրթ, անգետ կամ դյուրախաբ մարդկանց:

Սակայն ուրիշների կողմից արհամարհվելը չի ընկճում իսկական հավատացյալներին փնտրելու Քրիստոսին:

Մենք փնտրում ենք Քրիստոսին

Ողջ տարվա ընթացքում և, թերևս, հատկապես Սուրբ Ծննդյան այս օրերին օգտակար կլինի մի անգամ ևս տալ հետևյալ հարցը. «Ինչպե՞ս եմ ես փնտրում Քրիստոսին»:

Իր կյանքի դժվարին մի պահի Դավիթ թագավորը գրել է. «Ով Աստուած, դու ես իմ Աստուածը. առաւօտանց քեզ եմ ման գալիս. հոգիս ծարաւ է քեզ համար. մարմինս քեզ է ցանկանում»:[7]

Թերևս, Աստծուն փնտրելու այս հատկանիշն էր պատճառներից մեկը, որ Դավիթը նկարագրվում է որպես Աստծո սրտի պես մարդ:[8]

Եկեք փնտրենք մեր սիրելի Փրկիչին՝ Խաղաղության Իշխանին, Իսրայելի Սուրբին, Սուրբ Ծննդյան այս օրերին և ողջ տարվա ընթացքում: Այս ցանկությունը մեծամասամբ կախված է ոչ միայն այն բանից, թե ովքեր ենք մենք՝ որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամներ, այլ ավելի շուտ նրանից, թե ովքեր ենք մենք իրականում՝ որպես Քրիստոսի աշակերտներ:

ՀՂՈՒՄՆԵՐ
1. Ղուկաս 2.8
2. Տես Ղուկաս 2.15:
3. Տես Մատթեոս 2.1-2:
4. Տես Մատթեոս 2.11:
5. Տես Ղուկաս 2.22–38:
6. Տես 3 Նեփի 1:
7. Սաղմոս 63.1
8. Տես Գործք 13.22:

ԱՅՍ ՈՒՂԵՐՁԻ ՈՒՍՄՈՒՆՔԸ

Ինչպե՞ս կարող ենք ավելի լավ փնտրել Քրիստոսին՝ համաձայն Նախագահ Ուխդորֆի խորհուրդների: Կարող եք խրախուսել նրանց, ում ուսուցանում եք, հարցնել իրենց. «Ինչպե՞ս եմ ես փնտրում Քրիստոսին»: Հրավիրեք նրանց, որ սկսեն կիսվել, թե ինչպես է նրանցից յուրաքանչյուրը փնտրում Քրիստոսին սուրբ գրությունների իրենց ամենօրյա ուսումնասիրության ընթացքում: Դուք կարող եք նաև *Mormon.org* կայքում դիտել Սուրբ Ծննդյան տեսահոլովակ նրանց հետ, ում ուսուցանում եք և հրավիրեք նրանց մասնակցել այս ամենամյա հնարավորությանը՝ փնտրել Քրիստոսին, հետևելով Նրա ուսմունքներին:

ԵՐԵԽԱՆԵՐ

Սպասել Հիսուսին

Շատերն են սպասել Հիսուսի ծնունդին: Այժմ մենք սպասում ենք Նրա երկրորդ Գալուստին: Մենք կարող ենք պատրաստ լինել՝ Հիսուսի մասին սովորելով և Նրան հետևելով: Ինչպե՞ս եք դուք հետևում Հիսուսին: Նկարեք աստղ և ներսում գրեք ձեր մտքերը:

© 2017 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է ԱՄՆ-ում: Անգլերենի հաստատումը. 6/17:
Թարգմանության հաստատումը. 6/17: *First Presidency Message, December 2017*-ի թարգմանությունը: Armenian. 97932 201

Հոժարակամ կրել միմյանց բեռները

Աղոթքով ուսումնասիրեք այս նյութը և ոգեշնչմամբ ձգտեք առանձնացնել այն, ինչով կիսվելու եք: Սփոփող Միության նպատակի ըմբռնումն ինչպե՞ս է պատրաստում Աստծո դուստրերին հավերժական կյանքի օրհնությունների համար:

Հավատք, ընտանիք, սփոփանք

«Ձեր շրջապատում կան կարիքի մեջ գտնվող մարդիկ, ովքեր մեր ուշադրության, քաջալերման, աջակցության, մեր սփոփման և բարյացակամության կարիքն ունեն»,- ասել է Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը: «Մենք Տիրոջ ձեռքերն ենք երկրի վրա՝ Նրա զավակներին ծառայելու և բարձրացնելու հանձնառությամբ: Նա հույսեր է կապում մեզանից յուրաքանչյուրի հետ»:[1]

Նախագահ Հենրի Բ. Այրինգը՝ Առաջին Նախագահության Առաջին Խորհրդականը, ասել է. «Մեծ փոփոխություն սկսվեց ձեր սրտում, երբ դուք եկաք Եկեղեցի: Դուք ուխտ կապեցիք և խոստում ստացաք, որը փոխեց ձեր ողջ բնույթը: . . .

. . .Դուք խոստացաք, որ կօգնեք Տիրոջը, որ թեթևացնի [ուրիշների] բեռները և մխիթարի նրանց: Սուրբ Հոգու պարգևը ստանալուց հետո Ձեզ տրվեց զորություն՝ թեթևացնել այդ բեռները»:[2]

«Մենք կկամենանք օգտագործել ավետարանի լույսը, որպեսզի ուրիշներին տեսնենք այնպես, ինչպես Փրկիչն է տեսնում՝ կարեկցանքով, հույսով ու գթությամբ»,- ասել է Սփոփող Միության Գերագույն Նախագահ Ջին Բ. Բինգհեմը: «Կգա օրը, երբ մենք կատարելապես կըմբռնենք, թե նրանք ինչ են զգացել ու մտածել, և երախտապարտ կլինենք, երբ ողորմածություն ցուցաբերեն մեր նկատմամբ, հենց այնպես, ինչպես մենք ենք այս կյանքի ընթացքում գթառատ մտքեր ու խոսքեր հղել ուրիշներին: . . .

Երբ մենք փորձում ենք ավելի շատ նմանվել մեր Փրկիչին՝ Հիսուս Քրիստոսին, ապա մեզ համար պարտականություն ու պատիվ է ի սրտե ընդունել *յուրաքանչյուր մարդու* մեջ տեղի ունեցող կատարելագործումը»:[3]

Երբ մենք կրում ենք մեկս մյուսի բեռները և պահում մեր ուխտերը, մենք ճանապարհ ենք բացում Հիսուս Քրիստոսի համար՝ բուժել ուրիշներին: Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդն ուսուցանել է. «Հաշվի առնելով Խաչելության անըմբռնելի արժեքն ու Քավությունը, ես խոստանում եմ ձեզ, որ Նա այժմ չի պատրաստվում երես դարձնել մեզանից: Երբ Նա հոգով աղքատներին ասում է. «Եկեք ինձ մոտ», Նա նկատի ունի, որ գիտի ուղին և գիտի, թե ինչպես բարձրանալ: Նա գիտի դա, որովհետև անցել է այն: Նա գիտի ճանապարհը, քանի որ Նա *է* ճանապարհը»:[4]

Լրացուցիչ սուրբ գրություններ

Մատթեոս 25.40, Գաղատացիս 6.2, Մոսիա 2.17, 18.8–9

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Թոմաս Ս. Մոնսոն, «Ծառայեք Տիրոջը սիրով», *Լիահոնա,* փետրվար 2014, 4:
2. Հենրի Բ. Այրինգ, «Մխիթարիչը», *Լիահոնա,* մայիս 2015, 18:
3. Ջին Բ. Բինգհեմ, «Ավետարանի լույսը իմ տուն կբերեմ», *Լիահոնա,* նոյ. 2016, 6, 8:
4. Ջեֆրի Ռ. Հոլլանդ, «Կոտրված բաներ, որ պիտի նորոգվեն», *Լիահոնա,* մայիս 2006, 71:

Խորհեք այս մասին

Օգնելով ուրիշներին տանել բեռները և պահելով մեր ուխտերը, ինչպե՞ս կարող ենք ճանապարհ բացել Հիսուս Քրիստոսի համար օգնելու նրանց, ովքեր ունեն դրա կարիքը:

© 2017 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է ԱՄՆ-ում: Անգլերենի հաստատումը. 6/17: Թարգմանության հաստատումը. 6/17: *Visiting Teaching Message, December 2017*-ի թարգմանությունը: Armenian. 97932 201